ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՅԱՆ ՍԻՄԱ ՇԵՐՈՒՆԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍԻՆ

Ժ Գ. 00.02- ‹‹Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա›› (աշխարհագրություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան- 2012

Ատենախոսության թեման հաստատված է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝	աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Խ.Բ. Սարգսյան
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ա.Վ. Աբրահամյան աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ա.Ռ. Ավագյան
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝	Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. հունվարի 24-ին ժամը 14^{00}–ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2012 թ. դեկտեմբերի 24-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ա.Վ. Ավագյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը ու հրատապությունը: Հայերը հնուց զբաղվել են բնական գիտություններով, առանձնահատուկ վերաբերմունք ունեցել բնության, նրա օրինաչափությունների, մարդ-բնություն փոխհարաբերության վերաբերյալ: Այս խնդիրների լուծման բնագավառում անգնահատելի է «Աշխարհագրություն» առարկայի և աշխարհագրական գիտելիքների ուսուցման մեթոդական համակարգի դերը: Աշխարհահռչակ բնագետ, տիեզերագետ, մանկավարժ Ա. Շիրակացու «Աշխարհացույց» աշխատությունը նվիրված էր Հայաստանի վարչատարածքային բաժանման, բնակչության, բուսական և կենդանական աշխարհի, բնական հանածոների, բնակլիմայական պայմանների բնութագրմանը: Աշխատության մեջ ընդունվում էր երկրի գնդաձևություն գաղափարը՝ տեղեկություններ տալով հարևան պետությունների մասին: «Աշխարհացույցն» ինչպես միջնադարում, այնպես էլ հետագայում հայկական դպրոցներում օգտագործվել է որպես լիարժեք աշխարհագրության դասագիրք:

Հիմնախնդրին վերաբերող աշխարհագրական, մանկավարժական և պատմական գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ առկա էին տեսական-մեթոդաբանական բոլոր նախադրյալները Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի 2-րդ կեսին աշխարհագրական գիտելիքների ուսուցման առանձնահատկությունների բացահայտման համար, որի քննադատական կիրառությունը կարող է որոշակի նպաստ բերել ժամանակակից հանրակրթական հիմնական դպրոցում «Աշխարհագրություն» առարկայի ուսուցման գործընթացին: 19-րդ դարի 2-րդ կեսին Արևմտյան Հայաստանի կրթական ոլորտի առանձին բաղադրիչների վերաբերյալ կան որոշակի հետազոտություններ, իսկ «Աշխարհագրություն» առարկայի ուսուցման ուղղությամբ հետազոտություններ գրեթե չկան: Հետևաբար առաջադրված հարցը ուսումնասիրվել է հետևյալ տեսանկյունով՝ լուսաբանել քննարկվող ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաշատ շրջաններում կրթական գործի կազմակերպման առանձնահատկությունները, որը հնարավոր չի մեկնաբանել առանց եվրոպական քաղաքակրթության անդրադարձի, առանց համեմատությունների և վերլուծությունների: Մեր նպատակն է բացահայտել ոչ թե ողջ կրթական շարժումը, այլ «Աշխարհագրություն» առարկայի ուսուցման առանձնահատկությունները, հայ մանկավարժության բնորոշ գծերը՝ ցույց տալով դրանց բացառիկ էությունը:

Մեր աշխատանքը մի փորձ է ներկայացնելու բնագետ-մանկավարժների կողմից ստեղծված և հայկական դպրոցներում ուսուցանվող «Աշխարհագրություն» առարկայի դասագրքերը, դրանց բովանդակությունը, աշխարհագրության ուսուցման մեթոդիկայի հետ կապված մի շարք հարցեր 19-րդ դարի 2-րդ կեսի Արևմտյան Հայաստանում:

Քննարկվող ժամանակաշրջանում գոյություն են ունեցել աշխարհագրության ինքնուրույն դասընթացներ և աշխարհագրության դասագրքեր, որոնց բովանդակության տարբեր դրույթներ այսօր կարելի է ներառել հանրակրթական դպրոցում ուսուցանվող աշխարհագրության դասագրքերում:

Այսօր հանրակրթական դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում բնագիտական ցիկլի առարկաներին, այդ թվում և աշխարհագրությանը: 19-րդ դարի Արևմտյան Հայաստանի դպրոցները հիմնականում համապատասխանում էին այսօրվա հիմնական դպրոցի մակարդակին, հետևաբար բնության մեջ դիտարկելու, նկարագրելու, համեմատելու, բնական երևույթները վերլուծելու, եզրահանգումներ կատարելու կարողություններն ու հմտությունները այժմ էլ հրատապ են, կարևորվում են պետականության ամրապնդման, հայապահպանության և Հայաստանի զարգացման գործում:

<u>Հետազոտության հիմնահարցի մշակվածությունը:</u> 19-րդ դարի ընթացքում մեծաթիվ հայեր հարկադրված էին ուսում ստանալ և բնակվել հայրենիքից հեռու՝ ձևավորելով գիտնական-մանկավարժների մի սերունդ,որն անգնահատելի ավանդ ունեցավ ինչպես աշխարհագրական գիտության, այնպես էլ բնագիտության մյուս բնագավառներում: Արժանահիշատակ են Ղ. Ալիշանը, Հ. Սափարյանը, Կ. Եզյանը, Խ. Խրիմյանը և ուրիշներ, որոնց աշխատանքներն այսօր էլ հանդիսանում են գիտական ուսումնասիրությունների աղբյուր:

Արևմտահայ մշակույթի ամենախոշոր կենտրոնն էր Կ. Պոլիսը, որն իր ազդեցությամբ խթանել է Թուրքիայի մյուս հայկական գաղթօջախների և Հայաստանի քաղաքների, գավառների ազգային, կրոնական, կրթական ու մշակութային կյանքը: Կ. Պոլսի գաղթօջախի կարևորությունը կայանում է հայ եկեղեցու բարձր դիրքով ու դերով: Այս գործում բացառիկ նշանակություն ունեն Մ. Չամչյանի, Ս. Երևանցու, Ա. Սաֆրաստյանի, Ա. Փափազյանի հետազոտությունները:

Ճանաչողական մեծ նշանակություն ունի Մխիթարյան միաբանության անդամ, պատմաբան և աշխարհագետ Ղ.Ինճիճյանի աշխատությունը, որը խորացրել ու զարգացրել է Մ. Չամչյանի պատմագրական գիծը:

Արևմտահայ կրթօջախների պատմությանն անդրադարձել է Ա. Ալպոյաճյանը՝ լուսաբանելով հայ հանրության կազմավորման, տնտեսական, կրթական ու ազգային ինքնության հիմնահարցերը:

Արևմտահայ դպրոցի, մանկավարժական մտքի զարգացման մասին արժեքավոր տեղեկություններ են տվել Ղ. Չարըգի, Գ. Նազիկյանի, Բ. Եղիայեանի, Մ. Թանգարանյանի աշխատությունները՝լուսաբանելով դպրոցների ստեղծման պատմությունը, նպատակները, կրթության բովանդակությունը, ուսուցման ու դաստիարակության սկզբունքները, նաև նրանց դերը հայ մանկավարժական մտքի զարգացման գործում:

Մանկավարժական տարբեր խնդիրների լուծմանը նպաստել են Հ. Թութունջյանը, Ս.Կուրտիկյանը, Ե.Հակոբյանը, Ա.Կարինյանը և ուրիշներ՝ ներկայացնելով դպրոցական գործի այս կամ այն կողմը:

Արևմտահայության կրթության, մանկավարժական մտքի և դպրոցի պատմության վերաբերյալ հրատարակված Մ. Չերազի, Մ. Խրիմյանի, Մ.

Մամուրյանի , Ռ. Պերպերյանի, Ա. Գարագաշյանի, Ռ. Ջարդարյանի, Հ.Հինդլյանի և այլոց հոդվածները, մենագրությունները, մեթոդական ձեռնարկները, ուղեցույցները լուրջ ներդրում են հետազոտության մեջ: Հետազոտության վերաբերյալ արժեքավոր աշխատանքեր են կատարել Շ.Ոսկանյանը, Ա.Սարգսյանը, Է.Կոստանդյանը, Մ. Հակոբյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Խառատյանը և ուրիշներ:

Հետազոտության նպատակն է դիտարկել և վերլուծել 19-րդ դարի 2-րդ կեսին Արևմտյան Հայաստանում աշխարհագրության դասագրքերում և մեթոդական ձեռնարկներում առաջադրված ուսուցման մեթոդական համակարգը, վերլուծել հայ դասագրքաստեղծ մանկավարժների գործունեությունը, մշակել և հիմնավորել աշխարհագրական գիտելիքների ուսուցման առանձնահատկությունները այսօրվա համայնապատկերով:

Հետազոտության օբյեկտը 19-րդ դարի 2-րդ կեսի արևմտահայ դպրոցի աշխարհագրության ուսուցման բովանդակությունը և մեթոդական համակարգն է:

Հետազոտության առարկան աշխարհագրական գիտելիքների ուսուցման և մեթոդական համակարգի առանձնահատկությունների ուսումնասիրությունն ու քննադատական վերլուծությունն է 19-րդ դարի 2-րդ կեսի Արևմտյան Հայաստանում:

Հետազոտության գիտական վարկածը: Հանրակրթական դպրոցի բարեփոխումների արդի փուլում «Աշխարհագրություն» առարկայի ուսուցումն արդյունավետ կլինի, եթե.

- ուսումնասիրվի և ստեղծագործաբար կիրառվի հայ բնագետների, մանկավարժների կողմից կազմված աշխարհագրության դասագրքերի, մեթոդական ձեռնարկների բովանդակությունը,
- ուսումնասիրվի, ընդհանրացվի և ստեղծագործաբար օգտագործվի 19-րդ դարի 2-րդ կեսին Արևմտյան Հայաստանում հայ մանկավարժների կողմից կիրառված աշխարհագրություն առարկայի ուսուցման մեթոդական համակարգը:

Հետազոտության հիմնահարցը, նպատակն ու վարկածը պարզություն մտցրեցին **հետազոտության խնդիրների** մեջ.

- վերլուծել 19-րդ դարի 2-րդ կեսին Արևմտյան Հայաստանում կրթական գործի կազմակերպման պատմական և աշխարհագրական մոտեցումները,
- վերլուծել 19-րդ դարի 2-րդ կեսին Արևմտյան Հայաստանի դպրոցների, կրթօջախների իրական վիճակն ու առանձնահատկությունները,
- համեմատել տարբեր հեղինակներ մոտեցումները, տեսակետները, հիմնավորել հետազոտությունը և դրա կիրառական նշանակությունը,
- բացահայտել աշխարհագրության դասագրքերի ստեղծման անհրաժեշտությունը, օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները, մշակել ուղիներ աշխարհագրության դասագրքերի ստեղծման օրինակելի ավանդույթները կիրառելու, հիմնավորելու, նոր և առաջավոր գիտելիքների արտացոլումը աշխարհագրության դասագրքերում, դրանց կրթադաստիարակչական արժեքն ու նշանակությունը, ինչպես նաև դրանց կիրառումը ժամանակակից հայ դպրոցում:

Հետազոտության տեսական ու մեթոդաբանական հիմք են հանդիսացել մանկավարժական, աշխարհագրական, բնագիտական բնագավառների գիտական հետազոտությունները և մեթոդական գրականության հիմնադրույթները, ՀՀ օրենքները կրթության մասին, ինչպես նաև ժամանակակից նորարարական, մանկավարժական, իմացաբանական տեսությունները՝ բնության և հասարակության զարգացման մասին:

Հետազոտության մեթոդներն են՝ տեսական վերլուծության, վիճակագրական ուսումնասիրությունների և համեմատությունների, պատմահամեմատական վերլուծության և համադրության, ինչպես նաև փորձարարական աշխատանքների մեթոդները:

Հետազոտությունն իրականացվել է մի քանի փուլով:

Առաջին փուլում՝ (2003-2005թթ) ուսումնասիրվել և տեսական վերլուծության է ենթարկվել պատմական, մանկավարժական, բնագիտական գրականությունը: Ուսումնասիրվել է հիմնահարցի մշակվածության աստիճանն ու իմաստավորումը գիտական գրականության մեջ:

Երկրորդ փուլում՝ (2005-2007թթ) ուսումնասիրվել է աշխարհագրական բնույթի գրականությունը, նրա ուսուցման մեթոդիկային վերաբերող մանկավարժական գրականությունը, վերլուծվել աշխարհագրությանը վերաբերվող մեթոդական աշխատանքները, որոշվել հեղինակների դիրքորոշումը հիմնահարցի, մեթոդների գնահատման վերաբերյալ:

Երրորդ փուլում՝ (2007-2008թթ) իրականացվել է աշխատանքի շարադրանք և խնդրառու հոդվածների տպագրություն:

Չորրորդ փուլում (2009-2011) կատարվել է արված աշխատանքի վերջնական ամփոփում և վերախմբագրում:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ

- առաջին անգամ ուսումնասիրվել է 19-րդ դարի 2-րդ կեսին Արևմտյան Հայաստանում աշխարհագրական գիտելիքների ուսուցման առանձնահատկությունները, լուսաբանվել՝ «Աշխարհագրություն» առարկայի և նրա ուսուցմանը վերաբերվող հարցեր:
- վերլուծվել և բացահայտվել են 19-րդ դարի 2-րդ կեսին Արևմտյան Հայաստանի դպրոցներում «Աշխարհագրություն» առարկայի դրվածքը, դպրոցների հնարավորությունները, դերն ազգապահպանության, կրթական գործը կազմակերպելու ուղղությամբ:
- մշակվել է ուսուցման ժամանակակից մեթոդների արդյունավետ կիրառման հնարավորությունները:

Հետազոտության տեսական նշանակությունը նրանում է,որ

- աշխատանքի արդյունքները կարող են նպաստել աշխարհագրության ուսուցման խնդիրների լուծմանը,
- այն որոշակի նպաստ կբերի Արևմտյան Հայաստանի կրթական հարցերով զբաղվողների հետագա ուսումնասիրությունների համար,
- կնպաստի բուհերում ուսուցանվող աշխարհագրական ցիկլի առարկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքների մշակմանը:

Հետազոտության գործնական նշանակությանը կարելի է գնահատել հետևյալ տեսանկյունից՝

- հետազոտական աշխատանքի եզրակացությունները, եզրահանգումները, վիճակագրական, տեսական, մեթոդական նյութերն ու վերլուծությունները կարող են օգտակար լինել ոչ միայն գիտնականներին, որոնք կարող են լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել, այլ նաև մեթոդական մեծ օգնություն կլինեն աշխարհագրության ուսուցիչներին,
- աշխարհագրություն առարկայի ուսուցման մեթոդական համակարգի ստեղծագործաբար կիրառումն աշխարհագրության ուսուցիչների կողմից հնարավորություն կտա առավել արդյունավետ և ժամանակահունչ դարձնել այդ առարկայի յուրացման գործընթացը,
- հետազոտության փորձարարական նյութերը կարող են օգտագործվել աշխարհագրության դասագրքեր և մեթոդական ձեռնարկներ կազմող հեղինակների և ուսուցիչների կողմից,
- մեր հետազոտությունը որոշակի նպաստ կունենա հայ մանկավարժական մտքի ամբողջական ուսումնասիրության ուղղությամբ:

<u>Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են՝</u>

- 19-րդ դարի 2-րդ կեսին արևմտահայ դպրոցներում մանկավարժական որոշակի պահանջներով ուսուցանվել է աշխարհագրություն առարկան:
- Աշխարհագրական գիտելիքների ուսուցումը կարևորում էր միջառարկայական կապերի ընթացքում:
- Աշխարհագրական գիտելիքների ուսուցումն իրականացվել է ազգային հայրենասիրական ուղղվածությամբ, այն ունեցել է գործնական նշանակություն և առաջադիմական էություն**:**
- Հայ մանկավարժների կողմից կիրառված աշխարհագրություն առարկայի ուսուցման մեթոդական համակարգը քննարկվող ժամանակաշրջանում առաջադիմական էր և այսօր էլ կիրառելի:

<u>Ստացված արդյունքների հիմնավորվածությունը և հուսալիությունն ապահովված են հետևյալ առումներով:</u>

- գիտափորձի, փորձարարական ու գիտահետազոտական աշխատանքների արդյունքներով,
- հետազոտության գիտական մեթոդաբանությամբ, գիտափորձի կազմակերպման ընթացքում հետազոտության ժամանակակից մեթոդների ու միջոցների կիրառմամբ:

<u>Հետազոտության փորձաքննությունը և արդյունքների վերլուծումն ու ներդրումը:</u>

Հետազոտության համար փորձնական բազա են հանդիսացել Երևանի թիվ, 48,103,136 հանրակրթական դպրոցները, մանկավարժական պրակտիկաների ընթացքում թիվ 48 դպրոցը, ՀՊՄՀ աշխարհագրության բաժնի առկա ուսուցման 3-րդ և 4-րդ կուրսերում աշխարհագրության ուսուցման մեթոդիկայի գործնական աշխատանքների, նաև կարդացած զեկույցների միջոցով և գիտական հոդվածների տպագրմամբ կատարած աշխատանքները:

Ատենախոսության հիմնադրույթները, եզրակացությունները արտացոլվել են ութ հոդվածներում, որոնք հրատարակվել են տարբեր պարբերականներում և ժողովածուներում:

Հետազոտության ծավալն ու կառուցվածքը: Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 126 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի հրատապությունը, որոշված է նպատակը, հետազոտության օբյեկտը, առարկան, խնդիրները, ձևավորված է վարկածը: Ներկայացվել են հետազոտության մեթոդաբանական աղբյուրները, մեթոդիկան, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Գլուխ առաջին. Արևմտյան Հայաստանի սոցիալ-քաղաքական և կրթական իրավիճակները 19-րդ դարի 2-րդ կեսին:

Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի 2-րդ կեսին հայ ազգաբնակչության համար ստեղծված աննպաստ սոցիալ-քաղաքական պայմանները՝ տնտեսական հետամնացությունը, քաղաքական ոչ կայուն իրավիճակը, հայերի իրավունքների սահմանափակությունը, նպաստել են կրթական յուրատեսակ համակարգի ձևավորմանը:

1839 և 1856 թվականներին հրատարակված թանզիմաթները հիմք հանդիսացան Ազգային սահմանադրության նախագծի ստեղծման համար, որն իր սահմանափակությամբ և ոչ լիարժեքությամբ հանդերձ պատմական երևույթ էր: Սահմանադրությունից հետո ստեղծվեցին ուսումնական խորհուրդներ, միասնական կանոնադրություն, կրթական ծրագրեր, նորաբաց դպրոցներ:

Ազգային լուսավորության զարգացման, ուսուցիչների որակավորման, դասագրքեր ստեղծելու գործին ձեռնամուխ են եղել Եվրոպայի բարձրագույն հաստատություններում կրթություն ստացած մտավորական-մանկավարժները՝ Ն. Զորայանը, Գ. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Ս. Վիչենյանը, Գ և Մ. Աղաթոնները, Հ. Քյատիպյանը, Մ. Մամուրյանը և ուրիշներ, ովքեր շարժվում էին «ազգը պիտի կրթի յուր զավակներին» կարգախոսով:

Մտավոր ուսուցմանը զուգընթաց աշակերտները ստանում էին արհեստագիտական, երկրագիտական, հայրենագիտական գիտելիքներ, որոնք ներառված էին և իրագործվել են աշխարհագրություն առարկայի ուսուցման ընթացքում: Այս գործընթացը հաջողությամբ կիրառվել է Վանի Երկրագործական, Երամյան, Կարինի Սանասարյան, Զմյուռնիայի Մեսրոպյան, Կ. Պոլսի վարժարաններում:

Դպրոցներում կրթությանը զուգահեռ աշակերտները ստանում էին գործնական գիտելիքներ, վարում գյուղատնտեսական արտադրությունը, ինչպես օրինակ, Արմաշի դպրոցում՝ շերամապահություն, Կեսարիայի ուսումնարանում՝ կահագործություն, Մեսրոպյան վարժարանում՝ տպագրություն, Գալֆայան վարժարանում՝ ասեղնագործություն և այլն՝ ապահովելով կեցության հարցերը:

Գլուխ երկրորդ. Աշխարհագրություն առարկայի դրվածքը արևմտահայ դպրոցներում 19-րդ դարի 2-րդ կեսին քննարկված է պետականությունից զուրկ հայ ժողովրդի հոգևոր մշակույթի, լուսավորության զարգացման հնարավորությունները:

Հայ ժողովուրդը եկեղեցու միջոցով է իրագործել իր հոգևոր մշակույթի զարգացումը, ուր անգնահատելի է Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի դերը:

19-րդ դարի սկզբին արևմտահայության շրջանում կաթոլիկ և բողոքական միսիոներական դպրոցները թեև հետապնդում էին դավանաբանական-քաղաքական նպատակներ, սակայն որոշակի դեր խաղացին գիտության, աշխարհաբար դասագրքերի (հայոց լեզվի, թվաբանության, հայոց պատմության, աշխարհագրության և այլ գիտությունների) ստեղծման և տարածման ուղղությամբ:

Լուսավորություն տարածելու գործում մեծ դեր են ունեցել նաև կրթասիրական-բարեգործական ընկերությունները և միությունները: Միասնական դպրոցական համակարգ ստեղծելու ծրագիրը իրագործվել է 1864 թվականին ուսումնական խորհրդի կողմից մշակված և հրատարակած «Կանոնադրություն ընդհանուր բարեկարգության ազգային վարժարանաց» փաստաթուղթը, որում արտահայտվում էր արևմտահայության կրթական իրավիճակը, շահերը, պահանջները:

Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաշատ քաղաքներում դպրոցական գործին մոտ կանգնած մտավորականները մեծ տեղ են հատկացրել եվրոպական կրթությանը՝ ապահովելով եռաստիճան պարտադիր դասընթացը (նախակրթարան և երկրորդական վարժարաններ, վերջիններս ունեցել են դասարանային և լսարանային բաժիններ): Տե՛ս նկարներ 1,2:


Դպրոցները Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի 2-րդ կեսին
Պատրիարքարանի հասույթներով հիմնված դպրոցներ
Եկեղեցական կից դպրոցներ
Մասնավոր դպրոցներ
Պետական դպրոցներ
Բարեգործական, լուսավորական ընկերությունների կողմից հիմնված դպրոցներ
Միսիոներական դպրոցներ
Բողոքականներ
Կաթոլիկներ
Կ.Պոլիսի Նուպար-Շահնազարյան (1866-1876), Մեզպուրյան իգական (1879-1896), Կ.Փանոսյան Ազգայան իգական (1869-1876), Եսայան (1895), Ն.Վարժապետյան(1886)
Կ.Պոլիսի Գում-Գափուի Լուսավորիչ, Արմաշի բարձրագույն, Վարագա Ժառանգավորաց, սբ. Կարապետ (Կեսարիա), սբ.Աննա (Թոքատ)
Հ.Երամյան Մ.Սանասարյան
—
Միացյալ(84) Ազգանվեր Հայուհյաց (40) Հայկական բարեգործական (40) Կիլիկիայի որբախնամ - 6 Դպրոցասեր տիկնանց, Սյունյաց, Համազգային
երկրորդական բարձրագույն
Խարբերդի «Եփրատ» քոլեջ, Կ.Պոլիսի «Ռոբերտ» քոլեջ

Նկար 1



Նկար 2

Դիտարկված են Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաշատ շրջաններում հայկական կրթօջախների գործունեությունը, նրանց շենքային հարմարությունները, աշխարհագրություն առարկայի ուսուցման կազմակերպումը՝ դասագրքերի, զննական պարագաների առկայությունը և օգտագործումը, ուսուցման բազմատեսակ մեթոդների կիրառման հնարավորությունները:

Հայ գրողները, հասարակական-քաղաքական գործիչները, ֆիդայական շարժման մասնակիցներն աշխատել են հայկական դպրոցներում, դասավանդել տարբեր առարկաներ, այդ թվում և աշխարհագրություն: Անգնահատելի են Ն. Զորայանի, Հ. Սվաճյանի, Մ. Մամուրյանի, Գր. Արծրունու, Ռաֆֆու, Հ. Թլկատինցու, Հ. Պարոնյանի և այլոց դերը: Հայկական գործող կրթօջախները ունեցել են կրթական, հայապահպան-հայրենասիրական նշանակություն: Հայկական գործող կրթօջախներում՝ Կ. Պոլսի, Վանի, Կարինի, Զմյուռնիայի, Տարոն-Տուրուբերանի, Կեսարիայի, Մարաշի, Մալաթիայի և մյուս վարժարաններում մեծ տեղ է տրվել Եվրոպայի, հինգ աշխարհամասերի, Հայաստանի աշխարհագրության, հայրենագիտության ուսուցմանը: Տե՛ս քարտեզ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԱՇՏԱՏ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ
(XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ)


Մ Ե Վ Ծ Ո Վ
Մ Ա Ր Մ Ա Ր Ա Ծ Ո Վ
ՍԻՍԻԱՆ (Կ. ՊՈԼԻՍ)
ԱՆԿԱՐԱ
ԱՍԻԱ
ԱՍԻԱՆԱ
ԱՍԻԱՆԱՅԻ
ԱՍԻԱՆԱՅԻ ԹՈՒՐՔԻԱ
ԱՍԻԱՆԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՐԶՆԿԱ
ԱՆԿԱՐԱ
ԱՆԿՈՒՐԻԱ
ԱՆԿՈՒՐԻԱ ԹՈՒՐՔԻԱ
ԱՆԿՈՒՐԻԱ ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՆԿՈՒՐԻԱ (ԿԱՐԻՆ)
ԱՆԿՈՒՐԻԱ ՊԱՅԿԱՐԱՆ
ԱՆԿՈՒՐԻԱ ՍԱՄՍՈՒ

Գլուխ երրորդ. Աշխարհագրական գիտելիքների ուսուցման առանձնահատկությունները 19-րդ դարի 2-րդ կեսին արևմտահայ դպրոցներում, դրանց արդիականությունը: Հայ մտավորականները, դասագրքաստեղծ մանկավարժները մշակել են աշխարհագրության ուսուցման ինքնուրույն մեթոդիկա, թեև օգտվել են օտարազգի մանկավարժների աշխատություններից, նրանց առաջարկած լավագույն մեթոդներից, որոնք կիրառվել են հայկական դպրոցներում, վարժարաններում:

Հատկապես դիտարկված են Մ. Մամուրյանի, Հ. Հինդլյանի, Ա. Գարագաշյանի, Հ. Պարոնյանի, Խ. Խրիմյանի, Ռ. Զարդարյանի, Խ. Աբովյանի և այլոց բնագիտաաշխարհագրական հայացքները:

Աշխարհագրության ուսուցման մեջ արևելահայ ուսուցիչ Խ. Աբովյանը կարևորել է բազմատեսակ մեթոդների՝ զրույցի, պատմելու, քարտեզ կարդալու, զննական պարագաների, էքսկուրսիաների դերը բնագիտական գիտելիքների ձեռքբերման, դաստիարակչական և բարոյական որակների ձևավորման ընթացքում: Նա ստեղծել էր աշխարհագրության կաբինետ, դպրոցամերձ հողամասում՝ աշխարհագրական հրապարակ, ուր աշակերտները կատարել են օդերևութաբանական դիտարկումներ, ընդլայնել իրենց բնագիտաաշխարհագրական գիտելիքները: Այս փորձը կար Վանի Երկրագործական, Երամյան, Կարինի Սանասարյան վարժարաններում: Լինելով հայրենագետ ուսուցիչ՝ Խ. Աբովյանը կարևորել է տեղայնացման մեթոդը և վարպետորեն համեմատություններ կատարել «Ամերիկու լիս քցիլը» աշխատության մեջ:

Արևմտահայ իրականության մեջ առանձնակի ուշադրության են արժանացել Մ.Մամուրյանի դասագրքերը՝ «Նոր ընթերցարանը», «Առաջին ընթերցարանը», «Գիտելիք ու պարտիք տղոց», ուր ոչ միայն նշված են ուսուցման մեթոդներն ու սկզբունքները, այլ նաև կան շատ դրույթներ, որոնք օգտակար կլինեն այսօր աշխարհագրության ուսուցման ընթացքում: Իսկ Ռ. Զարդարյանի «Մեղրագետերը» անփոխարինելի էին տարրական դպրոցում աշխարհագրական գիտելիքների ապահովման գործընթացում:

Մեծ հեղինակություն են վայելել նաև Ա. Գարագաշյանի «Աշխարհագրություն ուսումնական կամ տիեզերագիտություն ի պետս ազգային դպրոցաց», «Աշխարհագրութիւն բնական ըստ նորագույն տեղեկութեաց» դասագրքերը, որոնք սովորողների մոտ ճանաչողական հետաքրքրություններ էին առաջացնում: Սակայն սրանց հակառակ եղել են դասագրքեր, որոնք աշակերտներին զրկել են համեմատելու, գործնական հմտություններ զարգացնելու և այլ կարողություններից: Այդպիսին է եղել տարրական դպրոցներում օգտագործվող «Աշխարհագրության դասընթաց» դասագիրքը:

Աշխարհագրության ուսուցման ընթացքում կարևորվում էին հայրենագիտական նյութերի օգտագործումը, որոնց մեծ տեղ են տվել Հ. Հինդլյանը, Խ. Խրիմյանը և ուրիշներ:

Երրորդ գլխում առաջարկվել են օրինակելի դասի տեխնոլոգիաներ ժամանակակից հիմնական դպրոցի «Հայաստանի աշխարհագրություն» առարկայի ուսուցման ընթացքում, որն ուսուցանվել է նաև Արևմտյան Հայաստանի հայկական կրթօջախներում և ունեցել հայրենասիրական,

հայապահպան նշանակություն: Նշված դասաձևը կիրառվել է մեր կողմից մանկավարժական պրակտիկաների ընթացքում:

9-րդ դասարան

Հայաստանի աշխարհագրություն

Դասի թեման - Լճերը, դրանց ծագումը

Բովանդակությունը - Ծանոթացնել ՀՀ լճերի հետ, դասակարգել ըստ ծագման, տալ դրանց ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը:

Կահավորումը - ՀՀ ֆիզիկական քարտեզ

Խթանում - Այս փուլում ուսուցիչը առաջադրում է թեստ, որը աշակերտները հինգ րոպեի ընթացքում պետք է շարադրեն, որի նպատակն է պարզել աշակերտների գիտելիքների իմացությունը:

1. Ջրոլորտ ասելով ի՞նչ եք հասկանում:

☐ օվկիանոսներ և ծովեր ☐ ստորերկրյա ջրեր
☐ գետեր, լճեր, և ջրամբարներ ☑ բոլոր թվարկվածներ

2. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի աղի լիճը:

☐ Սևանա լիճ ☐ Նազիկ լիճ
☑ Վանա լիճ ☐ Գայլատու լիճ

3. Հրաբխային ծագման ի՞նչ լճեր կան Հայկական լեռնաշխարհում:

☑ Նեմրութ լիճ ☐ Այղր լիճ
☐ Քարի լիճ ☐ Պարզ լիճ

Խմբակային աշխատանքը այս փուլում ակտիվացնում է ուսումնական գործընթացում սովորողների մասնակցությունը:

Իմաստավորում - Այս փուլում սովորողները շարունակում են մնալ ակտիվ՝ յուրացնելով նոր գաղափարներ, հակադրելով հին և նոր ինֆորմացիան: Ուսուցիչը դասարանում յուրաքանչյուր աշակերտի բաժանում է առանձին թղթերի վրա գրված հարցերը: Ամեն մեկը պատասխանում է հարցերին՝ լրացնելով խաչբառը, զարգացնում է ինքնուրույն մտածողություն և մեծ հետաքրքրություն դասի նկատմամբ:

Իմաստավորել նշանակում է ընկալվող նյութը միացնել արդեն հայտնի տեղեկատվության հետ:

<u>Ուղղահայաց</u>

1. Հայաստանի մայր գետը
5. Որոտանի վտակներից
6. Սահմանային գետ
8.Գետ, որի անվամբ կա մարզ, լեռնաշղթա, ջրամբար,
10. Դեբեդի վտակներից
12. Լիճ, որը նմանեցրել են ամպի ծվենի լեռների մեջ,

<u>Հորիզոնական</u>

2. Լիճ Աշոցքի սարահարթում
3. Փամբակի լեռներից սկիզբ առնող գետ
4. Արփայի վտակներից
7. Էռոզիոն հովիտ առաջացնող գետ
9. Արարատյան դաշտով հոսող գետ
11. «Քաղցր» գետ



Ուսուցիչը թեմատիկ վիկտորինայի միջոցով ևս որոշում է աշակերտների գիտելիքները հայրենի երկրի և դասի վերաբերյալ: ՈՒսուցիչը դասարանը բաժանում է երեք խմբի՝ առաջադրելով յուրաքանչյուրին երեք խումբ հարցեր:

<u>1-ին խումբ</u>

1. Ո՞ր լճի մեջ են թափվում 28 գետ ու գետակ, բայց դուրս է գալիս մեկը (Սևան):
2. Թվարկել ՀՀ «գունավոր» լճերը (Սև, Ալ, Կապույտ):
3. Ո՞ր ջրամբարներն են, որ գտնվում են պետական սահմանի վրա (Ախուրյան, Աղստև):

<u>2-րդ խումբ</u>

1. Ո՞ր ջրամբարներում է կառուցված «մարգարիտկա» (Կեչուտ, Շամբ):

2. Ո՞ր լճի ջրերն են աշխատացնում էլեկտրակայանների կասկադը (Սևան):
3. Ո՞ր լիճն է, որը մարդու կողմից վերածվել է ջրամբարի (Արփի):

3-րդ խումբ

1. Տավուշի մարզում ո՞ր գետերի վրա կան կառուցված ջրամբարներ (Հախում, Տավուշ, Ոսկեպար):
2. Թվարկել ՀՀ արտեզյան ավազանները (Արարատյան, Շիրակի, Մասրիկի, Փամբակի, Սիսիանի):
3. Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացումը ինչո՞վ է պայմանավորված (Որոտան-Արփա ջրատար թունել):

Իմաստավորման փուլում ստուգվում է ըմբռնածը՝ նոր ինֆորմացիան կապելով հնի հետ:

Կշռադատում - Խաչբառի ստուգումը ուսուցիչը կատարում է երկու ձևով՝

1. գրատախտակի մոտ մեկ աշակերտ պատասխանում է,
2. աշակերտները դասի վերջում գրավոր ուսուցչին են հանձնում պատասխանները:

Ուսուցիչը ստուգում և հայտնում է գնահատականները: Սովորաբար վիկտորինաները անց են կացվում բանավոր, բայց երբեմն այն կարելի է գրավոր անցկացնել: Ուսուցիչը յուրաքանչյուր խմբին կամ բանավոր ուղղում է հարցը, կամ էլ աշակերտները յուրաքանչյուր համարակալված հարցին պատասխանում են գրավոր, եթե որևէ հարց չգիտեն, դիմացը դնում են գծիկ: Այս աշխատանքը ևս ուսուցիչը հավաքում է երեք խմբերից: Այն խմբում, որտեղ գերակշռում են ճիշտ և դրական պատասխանները, նրանք համարվում են հաղթող: Կշռադատման փուլում ամրապնդվում են նոր գիտելիքները:

Ամփոփում – Ուսուցիչը, ամփոփելով կատարված աշխատանքների արդյունքները, գնահատում է: Հայաստանի աշխարհագրություն դասընթացի հաջող ուսուցման պայման է քարտեզներով կատարվելիք աշխատանքը, հատկապես ուրվագծային քարտեզի օգտագործումը, որը հնարավորություն կտա նյութը հեշտ յուրացնել:

Ակտիվ ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը բարձրացնում է դասի արդյունավետությունը՝ հանգեցնելով ուսումնաճանաչողական գործընթացի ակտիվացմա:

Գիտափորձն իրականացվել է Երևանի թիվ 48, 103, 136 միջնակարգ դպրոցներում:

- Ընդգրկվել են 5-9-րդ դասարանի աշակերտներ,
- Հետազոտվող դասարանում աշակերտների թիվը տատանվում էր 25-30-ի սահմաններում,
- Աշակերտներն ունեին զարգացվածության միջին մակարդակ,
- Գիտափորձն իրականացվել է աշխարհագրություն առարկայի շրջանակներում,
- Գիտափորձն իրականացվել է ՀՀ կրթակարգի առարկայական չափորոշիչների հիման վրա՝ ստուգելու համար՝
  - ❖ գիտելիքների համակարգը,
  - ❖ ճանաչողական գործունեությունը,

- ինքնուրույնության գործունեությունը,
- ստեղծագործական կարողությունները և հմտությունները:

Գիտափորձի վերլուծություններն ու ընդհանրացումները հանգեցրին հետևյալին.

1. Ավանդական ուսուցման տեխնոլոգիայով կիրառված դասերը չէին ընդգրկում ամբողջ դասարանը, իսկ ուսուցման ակտիվ տեխնոլոգիայի կիրառման ընթացքում ընդգրկվում է ողջ դասարանը / խմբերով/:
2. Ակտիվ ուսուցման տեխնոլոգիայի կիրառման արդյունքում աշակերտները ձեռք են բերում խորը գիտելիքներ, ճանաչողական կարողություններ և հմտություններ, կատարում են ինքնուրույն որոնողական աշխատանքներ:
3. Ակտիվ ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է աշակերտների համագործակցության և հաղորդակցության, կարողությունների և հմտությունների ձևավորմանը:
4. Ակտիվ ուսուցման տեխնոլոգիայի կիրառման դեպքում աշակերտները գտնվում են ստեղծագործական գործընթացի մեջ:
5. Ակտիվ ուսուցման տեխնոլոգիայի կիրառման դեպքում աշակերտների մոտ առաջանում է պատասխանատվություն, անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն:

Սակայն ակտիվ ուսուցման տեխնոլոգիան ունի թերություններ: Դրանք են՝ ակտիվ ուսուցման տեխնոլոգիան ժամանակատար գործընթաց է, առաջացնում է աղմուկ, ուշադրության շեղում, կարգապահական որոշակի խախտումներ, դժվար վերահսկելիություն: Այս պարագայում նաև՝ թույլ գիտելիքների և մտածողության տարբեր մակարդակների դեպքում կարևորվում է մանկավարժի վարպետությունը և հմտությունը:

Իսկ ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման գործում կարևորված են միջառարկայական կապերը: Աշխարհագրության ուսուցումը անհնար է պատկերացնել առանց բնագիտության, պատմության, մայրենի լեզվի և գրականության, մաթեմատիկայի, կենսաբանության և այլ առարկաներ հետ կապի: Արժևորված են Ն. Զորայանի հայացքները աշխարհագրության տեսական և գործնական նշանակության, միջառարկայական (հայոց պատմության, երկրաբանության, մայրենի լեզվի, մաթեմատիկայի հետ) կապերի մասին:

Աշխարհագրության դասերը աշակերտներին պետք է մղեն իրազննության, դատողությունների, եզրահանգումների: Ատենախոսը, կարևորելով միջառարկայական կապերի դերը, այնուհանդեձ ուսուցման տարբեր առարկաների մեջ առանձնացնում է աշխարհագրությունը, որը ոչ միայն լսելով, այլ տեսնելով, շոշափելով և ամեն ինչ շարժման մեջ դիտելով է առանձնացնում: Դիտարկված են աշխարհագրական գիտելիքների ուսուցման կրթադաստիարակչական առանձնահատկությունները, որոնք ապահովում են աշխարհագրական գիտության հիմունքների ուսուցումը՝ տեսության ձևով, որը սերտորեն կապված է գործնական կյանքի հետ:

Աշխատանքում արժևորվել է հողի գաղափարը, որը հայ մարդու գոյության, գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և ազատության հիմքն է:

Այսօրվա համար ուսանելի է համարում Հ. Պարոնյանի բարոյական դաստիարակության գերակա օղակ համարվող հայրենասիրությունը, որը ձևով ազգային էր, բովանդակությամբ ու արտահայտչամիջոցներով՝ համամարդկային: Այս գործում մեծ է ուսուցչի անձնական օրինակը, որն իր պատկերավոր խոսքով կարող է արթնացնել աշակերտներ երևակայությունը:

Աշխարհագրությունն ունի կրթադաստիարակչական բացառիկ նշանակություն, այն ճանաչելի է դարձնում աշխարհը, ձևավորում է մատերիալիստական աշխարհայացք՝ գտնվելով բնագիտական, տեխնիկական ու հասարակական գիտությունների շփման ոլորտում և կապված լինելով յուրաքանչյուրի հետ որոշակի կապերով:

Հարուստ էր Արևմտյան Հայաստանի 19-րդ դարի երկրորդ կեսի կրթամշակութային կյանքը, և բնականաբար այդ բնագավառում ուրույն տեղ ունեին բնագիտական և աշխարհագրական առարկաների ուսուցումը, որոնք նպատակաուղղված էին հայրենիքի իմացության, ճանաչողության գործընթացին: Հայկական դպրոցները, անկախ իրենց ինքնուրույն գործունեությունից, միևնույն է ունեին որոշակի կաշկանդվածություն թուրքական իշխանությունների կողմից: Ուստի Հայաստանի աշխարհագրության ուսուցումը արևմտահայ դպրոցներում իրականացվում էր բնագիտական և պատմական տարբեր առարկաների զուգորդությամբ: Այնուհանդերձ աշխարհագրական գիտելիքների ուսուցումը 19-րդ դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում որոշակի ուսանելի փորձ է ժամանակակից հայկական դպրոցների համար: Արևմտահայ դպրոցներում ուսուցումը ուներ ընդգծված պրագմատիստական (գործնական) բնույթ, այսինքն՝ աշխարհագրական գիտելիքների հաղորդումը զուգակցվում էր հայրենի բնակավայրի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ տնտեսագիտական նպատակներով: Կարող ենք նշել Մ. Խրիմյանի «Պապիկ և թոռնիկ», «Սամվել և Սիրաք» աշխատությունները, որոնց գերակշիռ մասը վերաբերում էր աշխարհագրական, տնտեսագիտական գիտելիքների ուսուցմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր հետազոտությունը ներառում է հայ կրթամշակութային կյանքի այնպիսի բարդ ժամանակաշրջան, երբ խաղաքարտի վրա էր դրված պատմական Հայաստանի ճակատագիրը, երբ եվրասիական քաղաքականություններն էին իրենց ճշգրտումները կատարում ասիական թատերաբեմում: Այդ բախտախնդիր ժամանակաշրջանում արևմտահայ կրթական կյանքը որոշակի զարգացում ապրեց: Հատկանշական էր, որ հայ կրթական կյանքը բնորոշվում էր զարգացման երկու միտումներով.

ա) ընդգծված ազգային էությամբ,

բ) ուղղակի՝ առանց միջնորդավորման եվրոպական քաղաքակրթական ազդեցությամբ:

Արևմտահայ գործող դպրոցներն ունեին որոշակի համակարգված ուսումնական պլաններ, թեև այդ դպրոցները հիմնադրված էին տարբեր հիմունքներով (պատրիարքական, եկեղեցական, բարեգործական): Ավելորդ չէ նորից ընդգծել, որ կրթալուսավորական գործի ակունքներում կանգնած էին 19-րդ դարի հայ նշանավոր ազգային ու հասարակական գործիչները, գրողները, հոգևոր առաջնորդները:

Դպրոցների ուսուցման բովանդակության մեջ որոշակի և հստակեցված տեղ ունեին բնագիտական և աշխարհագրական (երկրագիտական) առարկաները: Աշխարհագրական գիտելիքների հաղորդումը զուգակցվում էր ազգային-հայրենասիրական դաստիարակությամբ: Մասնավորապես այդ գործընթացը արդյունավետ բնույթ ուներ Վան-Վասպուրականի, Կեսարիայի նահանգներում, Կարինում, Զմյուռնիայում, Կիլիկիայում և Կ.Պոլսի թաղային վարժարաններում: Աշխարհագրական գիտելիքների ուսուցումն ուներ նաև որոշակի ազգային-պատմական ուղղվածություն, որն էլ իր հերթին նպաստում էր ազգային- ազատագրական զարթոնքին (Զեյթունի, Մուշի, Սասունի ազատագրական շարժումներ): Աշխարհագրական գիտելիքների հաղորդումը զուգակցվում էր տնտեսագիտական կրթության ապահովմամբ: Մասնավորապես բնակավայրին համապատասխան արհեստագործական ու տնտեսվարական կրթություն տալուն: Մեր հետազոտությունն ապացուցում է, որ 19-րդ դարի արևմտահայ դպրոցներում իրականացվող աշխարհագրական գիտելիքների ուսուցման գործընթացն ուներ շահեկան առանձնահատկություններ, որոնք, որպես օրինակելի փորձ, կիրառելի են ժամանակակից հայկական դպրոցներում, հատկապես կրթական նոր տեխնոլոգիաների կիրառման առումով:

Ելնելով մեր հետազոտության արդյունքներից կարելի է եզրակացնել.

1. 19-րդ դարի 2-րդ կեսին արևմտահայ դպրոցների ուսուցման բովանդակության մեջ հստակ և կայուն տեղ ունեին աշխարհագրական (երկրագիտական) առարկաները:
2. Աշխարհագրական գիտելիքների ուսուցումն ուղեկցվում էր տնտեսագիտական կրթության իրականացման ճանապարհով:
3. Աշխարհագրական գիտելիքների ուսուցումը զուգակցվում էր ընդգծված ազգային-հայրենասիրական դաստիարակությամբ:
4. Աշխարհագրական գիտելիքների ուսուցումը լայնորեն էր զուգակցվում մայրենի լեզվի ու գրականության ուսուցմանը (ինտեգրացված տեխնոլոգիա), որ խիստ օրինակելի է այսօր:
5. Արևմտահայ դպրոցների աշխարհագրական գիտելիքների ուսուցման ընթացքում կիրառվում էին ուսանելի տեխնոլոգիաներ՝ հաշվի առնելով քննարկվող ժամանակաշրջանի եվրոպական առաջավոր փորձը:
6. Արևմտահայ դպրոցներում իրականացվող աշխարհագրական գիտելիքների ուսուցման գործընթացն ունի արդիական էություն հատկապես ժամանակակից նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման առումով (ակտիվացնող ուսուցում, ինտերակտիվ ուսուցում, բազմաբնույթ մտածողություն, ինտեգրացված ուսուցում և այլն):

Հետազոտության հիմնական բովանդակությունն արտացոլված է հետևյալ աշխատանքներում.

1. Դայան Ս. Ծ., «Վանի դպրոցները 19-րդ դարի երկրորդ կեսին», «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես հասարակական գիտությունների 4 (8), Վանաձոր, 2005.–էջ 108-110:

2. Դայան Ս.Ծ., «Կրթական գործի վիճակը Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի 2-րդ կեսին», «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես հասարակական գիտությունների 2(10), Վանաձոր, 2006.–էջ 140-141:

3. Դայան Ս. Ծ., «Գ. Սրվանձտյանցի մանկավարժական վաստակի մասին» ժողովածու. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութեր, 2-րդ պրակ, «Մանկավարժ» հրատ., Երևան, 2008.–էջ 193-195:

4. Դայան Ս.Ծ., «Դեպի Արարատ առաջին գիտարշավը», Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր. «Դպիր» հրատ., Գյումրի, 2009.–էջ 365-370:

5. Դայան Ս.Ծ., «Ակտիվ ուսուցման տեխնոլոգիան աշխարհագրության դասին» ժողովածու, Պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութեր, III պրակ, «Մանկավարժ» հրատ., Երևան, 2010.–էջ 109-111:

6. Դայան Ս.Ծ., «Աշխարհագրական գիտելիքների ուսուցման մեթոդական համակարգը Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի 2-րդ կեսին», Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, «Վան Արյան» հրատ., Երևան, 2011.–էջ 533-535:

7. Դայան Ս.Ծ., «Աշխարհագրական գիտելիքների ուսուցման կրթադաստիարակչական նշանակությունը Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի 2-րդ կեսին», Գիտական տեղեկագիր, Երևան, 2011.–էջ 171-176:

8. Դայան Ս.Ծ., «Ինտեգրացված դասերի դերը աշխարհագրական գիտելիքների ուսուցման ընթացքում Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի 2-րդ կեսին, դրանց նշանակությունը», Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր.«Էլդորադո» հրատ., Գյումրի, 2012.–էջ 119-123:

ДАЯН СИМА ЦЕРУНОВНА

ОСОБЕННОСТИ ИЗУЧЕНИЯ ГЕОГРАФИЧЕСКИХ ЗНАНИЙ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 19-ГО ВЕКА В ШКОЛАХ ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Диссертация на соискание ученой степени кандидата педогогических наук по специальности 13.00.02- «Методика преподавания и воспитания»(география).

Защита диссертации состоится 24-ого января 2013г., в 14^{00} на заседании специализированного совета по педагогике 020 ВАК «Педагогика» при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна по адрессу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В образовательной сфере Западной Армении второй половины 19-го века по проблеме изучения предмета «География» не было проведено каких-либо исследований. В аспекте особенностей организации учебного процесса выдвинутый вопрос изучен в районах Западной Армении и Турции, населённых большим количеством армян. Данную проблему целесообразно изучать в сопоставлении с европейской образовательной системой. Мы прослеживаем в работе особенности изучения предмета «География», выявляя при этом сущность армянской педагогики.

В исследуемой эпохе имели место самостоятельные курсы географии и учебники, содержание которых актуально в учебниках географии и сегоднящней школы.

Сегодня в общеобразовательной школе РА большое внимание уделяется предметам естественно-научного цикла, в том числе и географии. Школы Запдной Армении в целом соответсвовали уровню современной основной школы. Развитие у учащихся способностей и навыков наблюдения в природе, описания, сравнения, анализа природных явлений, умозаключений и сейчас актуальны и важны в деле укрепления государственности, развития Армении.

Цель исследования- изучить и анализировать выдвинутую систему педагогического обучения в учебниках и методических пособиях по географии во второй половине 19-го века в Западной Армении, а также обработка и аргументирование особенностей обучения географических знаний в свете актуальности и деятельности педагогов – авторов учебников.

Задачи исследования: анализирование исторических и географических подходов в организации образовательного процесса; анализ особенностей и рельных состояний школ Западной Армении во второй половине 19-го века. Нашей задачей также является сравнение концепций разных авторов; аргументирование исследования и его практического значения; необходимость создания учебников географии; объективные и субъективные трудности учебного процесса;

использования традиционных достижений при создании учебников географии в современных армянских школах.

Содержание исследования. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения. Общий объем диссертации 126 страниц.

Научная новизна исследования состоит в том, что впервые были изучены особенности изучения географических знаний во второй половине 19-го века в Западной Армении, научно освещены вопросы, касающиеся предмета «География» и его изучения, анализированы и выявлены возможности и роль школ в деле организации обучения и сохранения нации, обоснованы продуктивные возможности реализации современных методов в практике обучения.

Теоретическое значение исследования. Результаты исследования могут способствовать решению задач в обучении географии в школе, а также в исследованиях специалистов, занимающихся вопросами образования Западной Армении. Полученные нами результаты способствуют изучению в ВУЗ-ах предметов географического цикла, а также написанию курсовых и дипломных работ.

Практическое значение исследования можно оценить следующим образом: сделанные выводы, заключения, статистические, теоретические, методические материалы могут быть полезны при анализе ученными дополнительных исследований, а также могут служить продуктивным методическим подспорьем для учителей географии. Экспериментальные материалы исследования могут быть использованы учителями, педагогами, авторами учебников и методических пособий по географии.

DAYAN SIMA TSERUN

THE PECULIARITIES OF GEOGRAPHICAL KNOWLEDGE ACQUISITION IN OF WESTERN ARMENIA IN THE SECOND OF THE 19TH CENTURY

Thesis for getting a candidate degree in Pedagogical Sciences, specialty 13.00.02- “Teaching and Education Methodology” (Geography)

The thesis defense will be held on 24 of January, 2013 at 14:00 at the meeting of the specialized pedagogical committee 020 HAC for granting scientific degrees at Armenian State Pedagogical University after Kh.Abovyan (address: 17 Tigran Mets str., Yerevan).

SUMMARY

The relevance of the research: In the second half of the 19th century some research was conducted on the separate aspects of educational sphere, but no research was carried out specifically on the subject of "Geography". Therefore the above mentioned matter was reviewed from the following point of view: illuminate the peculiarities of teaching process organization in the regions of Western Armenia and Turkey inhabited by a vast number of Armenians, which are impossible to interpret without referring to the European civilization without comparison and analysis. Our aim is to reveal not the whole educational movement, but the peculiarities of teaching the subject of "Geography", the characteristic features of Armenian pedagogy by illustrating their explicit essence.

Our work is a mere attempt of introducing the "Geography" subject textbooks taught at Armenian schools compiled by ecologist-pedagogues. In the above mentioned period individual courses and "Geography" textbooks existed, different aspects of the content of which can be involved in "Geography" textbooks of secondary schools nowadays.

Today, in secondary schools, a great attention is paid to the courses of Nature Studies, including Geography. In the 19th century the schools of Western Armenia had the same knowledge level as today's schools, therefore the abilities and skills to observe in nature, illustrate, compare and analyze the natural phenomena and come to conclusions, which are urgent even now, and are essential for state strengthening and development of Armenia.

The aim of the research: To observe and analyze the system of teaching methods proposed in textbooks and methodical manuals of Geography in the second half of the 19th century at the schools of Western Armenia, to discuss the Armenian textbook author-pedagogues' activity, work out and substantiate the peculiarities of teaching geographical knowledge in today's panorama.

The objections of the research: Methodical system and content of teaching Geography in the second half of the 19th century in Western Armenia.

The content of the research: Investigation and critical analyses of methodical system peculiarities and teaching geographical knowledge in the second half of the 19th century in Western Armenia.

The scientific innovation of the research: The peculiarities of of teaching geographical knowledge were first studied in the second half of the 19th century in Western Armenia, illuminated scientifically and pedagogically the subject of "Geography" and the issues related to its teaching.

Here are analyzed and explored the possibilities and the role of school in the organization of teaching process and for preserving the Armenian nation, as well as worked out effective means of using modern methods of teaching.

The theoretical value of the research: The research results may contribute to solve the problems of teaching Geography, and will be useful for Western Armenian specialists' further research and will be useful for students who work on term paper and diploma paper.

The practical inportance of the research: The research conclusions, statistic, theoretical, methodical materials and their analyses can be useful not only for scientists, who can do extra investigations, but also for Geography teachers, making the learning

process of this subject effective and modernized. The research experimental materials can be used as contribution for the authors and teachers who write Geography textbooks.

The approbation of the research: The experimental basis for the research are secondary schools N48, 103,136 and school N48 where the pedagogical practice was carried out, as well as investigations hold by 3rd and 4th year students at the practical classes of "Methods of Teaching Geography", including reports and scientific articles.

The research postulates and conclusions are reflected in 8 articles which are published in different scientific periodicals and digests.